№ 58 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 27 1889 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 27 № 58

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐԿԱՅ 1889 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում թամամշեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեգործական ընկերութեան Շուշու ճիւղը. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Քեչիշ-Բաբա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՇՈՒ ՃԻՒՂԸ

Այս օրերս Հայոց Բարեգործական ընկերութեան Շուշու տեղական վարչութիւնը տպագրել է 1888 թւի իր գործունէութեան հաշիւը։ Այդ հաշուից երևում է, որ ընկերութիւնը 1888 թւի ընթացքում ունեցել է 48 գործադիր անդամ։ Բազմահայ Շուշին տալիս է ընդամենը 48 անդամներ.... 1888 թւի մայիսի 22-ին կայացած ընդհանուր ժողովը հերթով հեռացած անդամների տեղ ընտրել է վարչութեան 3 անդամ և փոխանդամ։ Վարչութիւնը բաղկացած էր 5 անդամներից և 3 փոխ-անդամներից։

Վարչութիւնը կամենալով Շուշու հասարակութեանը իր գոյութիւնը աւելի յայտնի կացուցանել, որոշեց բանալ Շուշում մի դպրոց. որովհետև ամենից օգտակար կարող է լինել, նայած հանգամանքներին, արհեստագիտական դպրոցը, ուստի որոշվեցաւ բանալ օրիորդաց արհեստագիտական դպրոց։ Այդ դպրոցի համար հարկաւոր էր 1,600 ռուբլի։ Որովհետև ընկերութիւնը լիովին այդ գումարը չունէր, այդ պատճառով նա դիմեց Թիֆլիսի խորհրդին՝ 300 ր. նպաստ խնդրելով. բայց խորհուրդը մերժեց տալ այդ նպաստը, պատճառ բերելով, թէ բազմահայ Շուշին կարող է ինքը պահել մի դպրոց։ Ինչպէս երևում է, կենտրոնական խորհուրդը չը գիտէ, թէ որքան անտարբեր են շուշեցիները դէպի հասարակական գործերը.... Դպրոցը այդ պատճառով չը բացվեց։

Երբ դպրոց բանալը չյաջողվեց, ընկերութիւնը վճռեց բանալ Շուշում գրադարան-ընթերցարան, որի նպատակը լինի նպաստել ընթերցանութեան տարածման հասարակութեան բոլոր դասակարգերի մէջ։ Այդ ընթերցարանը, ինչպէս յայտնի է, արդէն բացված է, բայց, ցաւելով պիտի ասենք, ինչպէս երևում է, շուշեցիները դարձեալ կատարեալ անտարբերութեամբ են վերաբերվում դէպի այդ հիմնարկութիւնը, թէև դա իրանց, ի հարկէ, ահագին օգուտ պիտի տայ, եթէ հետաքրքրութեան նշաններ ցոյց տան....

Դառնանք հաշուին։ Ընկերութիւնը ունեցել է մուտք 1,342 ր. 87 կոպէկ, որի մեծ մասը կազմում են նուէրները և թատրոնական ներկայացումներից ցոյացած արդիւնքը, այն է՝ 788 ր. 81 կոպէկ։ Ծախս եղել է 1,338 ր. 28 կոպէկ, որի մեծ մասը, 871 ռուբլի 25 կոպէկ, ծախսվել է բացված գրադարան-ընթերցարանի համար, ուրեմն ընկերութեան գլխաւոր գործունէութիւնը կազմում է ընթերցարանի բանալը։

Վերջացնելով մեր խօսքը, մենք աւելորդ չենք համարում մի փոքր համեմատութիւն անել ընկերութեան 1887 թւի գործունէութիւնը 1888 թւի գործունէութեան հետ. ընկերութիւնը 1887 թւի ընթացքում մուտք ունեցել է 805 ր. 47 կոպէկ և ծախս՝ 512 ր. 78 կոպէկ, իսկ 1888 թւի ընթացքում՝ մուտք ունեցել է 1,342 ր. 87 կոպէկ և ծախս 1338 ր. 28 կոպէկ, այսինքն համարեա թէ 1888 թւին երկու անդամ աւելի մուտք և ծախս է ունեցել, քան 1887 թւին։ Սրանից պարզ երևում է, որ վարչութիւնը 1888 թւին բաւականին եռանդով է գործել, և նա յոյս ունի, որ վաղ թէ ուշ պիտի օրիորդաց արհեստագիտական դպրոց բանայ Շուշում։ Ինչ կասկած, որ եթէ Շուշու հասարակութիւնը մի փոքր հետաքրքրութեամբ վերաբերվի դէպի ընկերութիւնը, այն ժամանակ նա աւելի կառաջադիմի։ Աչքի ընկնող անտարբերութիւնը պատիւ չէ բերում Ղարաբաղի մեծ կենտրոնին՝ Շուշուն....

***

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 17-ին

Ամսիս 14-ին կայացաւ ս. Գայիանեան օրիորդական դպրոցի օգտին կազմած վիճակախաղը։ Վիճակարկութեան նիւթերը բացառապէս աշակերտուհիների մի տարվայ ընթացքում պատրաստած ձեռագործներն էին։ Ընդամենը 2,400 տոմսակ կար 25 կոպէկ արժողութեան, որոնցից մօտ 550-ը տանող համար։ Երկու տարի սրանից առաջ սովորաբար դպրոցի վարժուհիները կամ աւելի առաջ հոգաբարձուներն ու հոգաբարձուհիները խանութ խանութ ման էին գալի իրեր ժողովելու յօգուտ դպրոցի և այդ ընծայաբերած իրերը վիճակ էին ձգվում։ Ինչ խօսք որ այդ միջոցը շատ անախորժութիւնների պատճառ էր լինում։ Վերջին երկու տարին, ձեռագործութեան ուսուցչուհու շնորհով, ուսման տարվայ ընթացքում աշակերտուհիներն այնքան իրեր և ձեռագործեր են հացնում, որ բոլորովին բաւականացնում է վիճակախաղին։ Մայիսի 14-ին ժողովված էր շատ մեծ բազմութիւն. ստուար մասը տիկիններ և օրիորդներ էին։ Այստեղ էր և թեմիս փոխանորդ սրբազանը, որը իր կարճ ատենախօսութեամբ բացեց հանդէսը, հրաւիրելով յարգոյ հասարակութեանը սիրով և ուրախութեամբ մասնակցել վիճակահանութեանը և տարած իրերի վրա նայել իբրև իրանց որդիների աշխատանքի վրա, որով իրն առաւել մեծ գին և արժէք կը ստանայ։ Սկսվեց վիճակահանութիւնը։ Ոչ մի տոմսակ չը մնաց։ Հետևեալ օրը ուղղակի դիմելով դպրոցի վարչութեանը հաւաստիացանք, որ ուղիղ 600 ր. եկամուտ են ունեցել։

Այսօր մեր քաղաքը մեծ պատրաստութեամբ սպասում է ճաշից յետոյ 5—6 ժամին ընդունելու երկրիս կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակովին։ Կարգադրված է, որ բոլոր աղգութիւնների դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները դուրս բերվեն ճանապարհի երկու կողմի վրա շարելու։ Նորից կանգնացրին նոյն տեղում նոյն յաղթական կամարը, որը մի քանի օր առաջ առիթ ունեցաւ իր տակից անցուցանելու պարսից Շահին։ Վաղն իշխանը ուղևորվելու է Էջմիածին Վ. Կաթողիկոսին տեսնելու։

Անցեալ կիրակի օրը, թեմական դպրանոցի համար հոգաբարձուներ ընտրող պատգամաւորները, սրբազան փոխանորդի հրաւէրով, ժողովված էին Գայիանեան օրիորդաց դպրոցի համար ևս հոգաբարձուներ ընտրելու, թէև այդպիսի ընտրութիւն անելու լիազօրութիւն չունէին ժողովրդից. ով է հարցնողը։ Ներկայ էին կիսից մինով աւելի։ Ընտրվեցան հոգաբարձու պ.պ. Էմին Տէր-Գրիգորեան և ուսուցչական սեմինարիայի ստորին դասատան ուսուցիչ Դիմիտրի Պոպով, իսկ կանդիդատ՝ բժիշկ Լևոն Տիգրանեան և Յովսէփ Տէր-Յովսէփեան։ Ընտրութիւններից յետոյ ընտրողներն իրանք էլ մնացել էին զարմացած, որ արդիւնքը մարդատանաչութեան միանգամայն հակառակն էր եղել։ Ե՞րբ չէ հայը գործելուց յետոյ մտածում։ Ընտրողներից մինը տեղն ու տեղը խոստովանվեց, որ ինքը դժուար թէ կարողանայ այդ ծանր պարտականութիւնը կատարել, ծանր՝ որովհետև դպրոցը ահագին ծախսեր ունի, իսկ հաստատ եկամուտի և ոչ մի աղբիւր։ Նոր կանոնադրութեամբ ժողովրդից միայն երկու հոգի պիտի ընտրվեն. միւս երկուսից մինը պիտի լինի եկեղեցու քահանան, միւսը երեցփոխը. Պօղոս-Պետրոսի քահանաներից գերապատիւ փոխանորդը նշանակել է Աստուածատուր ծերունի քահանային և խեղճ հայ քրիստոնեայ Պօղոսեան երեցփոխանին. երկուսն էլ միանգամայն դժգոհ են իրանց պարտաւորութիւնների աւելանալու համար։ Եւ Պօղոս-Պետրոսի հինգ քահանաներից ուրիշ ոչ մէկին չէր կարելի ընտրել. մինը իր ընդունակութիւններով շատ հեռու է, միւսը անդամ է կոնսիստորիայի և ուժից վեր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԵՇԻՇ—ԲԱԲԱ

(ՄԻ ԳԻՄ ՊԱՐՍԿԱՀԱՑԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)

Քեշիշ-բաբան դժուարութեամբ ոտքի կանգնեց, և իր չորացած երկու ձեռքով ամեն մէկիս ձեռքը բռնեց, ասելով.

—Համեցէք, համեցէք, աղաներս, բարով, հազար բարով, համեցէք հանգստացէք։

—Աղաներս, բարի էք շնորհ բերէ, կրկին մեզ դարձաւ, երբ նրա առաջարկութիւնը ընդունելով, նստած էինք ներքնակի վրա։

Վերջին խօսքերը ասելիս՝ նա ըստ տեղական սովորութեան նստած տեղից քիչ ծնկների վրա բարձրացաւ և յետոյ շուռ գալով կրկին վերցրեց լօշի կտորը։

Նրա վրա գրուածքին մի անգամ էլ ուշադրութեամբ նայելուց յետ, դարձաւ դէպի դրան մօտ չադրայի մէջ կոլոլված պարսկուհին։

—Ցար, ասաց նրան պարսկերէն, այնպէս արա, ինչպէս ասացի։ Պարսկուհին խոնարհութեամբ ստացաւ և ապա 3 շահին (5 կոպէկ) դնելով կտցաւոր հին «ջամի» կողքին՝ ուզեց հեռանալ, սակայն դրան փառդայի մօտ՝

—Բաղբչլա, (ներիր) ասաց, օղի քի բէհաեա զըղի յիմազի՝ նէջա գիարակ.. (կարելի է անամօթ աղջիկը չուզեց ուտել, ինչպէս պէտք է...)

—Օնըն էօզդեա չարմսի, ամալի դա վար, բաջի (դրա ուրիշ ճարը և հնարն էլ կայ, քոյր) պատասխանեց Քեշիշ-բաբան։

—Ալլահ էօմիւր վէրսըն (Աստուած կեանք տայ) ասաց պարսկուհին և հեռացաւ։ Քեշիշ-բաբան, բարձրացնելով տակի կապոյտ ներքնակը, երեք շահին միւս շահիների կոյտի վրա աւելացրեց։

—Երևի հիւանդի համար էր, ասեցի, դառնալով դէպի Քեշիշ-բաբան։

—Ո՛չ, աղաս, կորուստի համար էր. դրացու աղջիկը վերցրել է դրա մատանին։

—Ինքը տեսել է։

—Ո՛չ, աղաս, ըզղամը՝ թիւն է յայտնում։

—Ի՞նչպէս, հարցրի։

—Ա՛յ, այսպէս, ասեց Միրզա-Պետրոսը, ջամը դնելով իսկոյն իմ առջև և դառնալով դէպէ Քեշիշ-բաբան.

—Քեշիշ-բաբա, աւելացրեց նա ծիծաղելով, ինչ տանը, որ այս մի բանը մեզ սովորեցնէք։

—Աղա, ըզղամի շնորհը անըմբռնելի ա, բայց խօսքերը կարող եմ, որ ասեմ։

—Տեսնում էք ջամի ջրի մէջ խմորի գնդակը, ցոյց տալով ասեց ինձ Միրզա-Պետրոսը, այդ գնդակի մէջ ըզղամով (թւով) փոքրիկ թղթի վրա սատանաների անուններ են գրված....

—Ո՛չ, աղա, հրեշտակաց անուններ՝ա, ասեց ուղղելով Քեշիշ-բաբան։

—Ճիշդ է, հրեշտակաց անուններ են գրված, շարունակեց Միրզա-Պետրոսը, կորուստ ունեցողում վրա կասկած ունի, անունները ասում է Քեշիշ-բաբային և Քեշիշ-բաբան էլ մէկ մէկ այդ անունները ասելով կանչում է։ Ում անուան վրա գնդակը ջրի տակից բարձրանայ՝ նա է գողը։

—Բեա՛լի, աղա, բայց առաջ ի վերայ ջրին պէտք ա ասել անուանքս. «Պահի, Շահի, Եղտայի, Էանուր, Գայի, Ելտայի, դուք յայտնի արէք զզողն» ասեց Քեշիշ-բաբան։

—Դրանց անունները գրեցի, ասեց Միրզա-Պետրոսը յիշատակարանը և մատիտը ձեռքում, իսկ այն հացի վրա, որ գողին պէտք է տալ ուտելու...

—Նրա վրա էլ, աղա, գրէ այսպէս. «Ահիեայ, շարահիեայ, ախմախ տուլա, աճի աճի տան ջիրա, աշխիպ իջախշիա և ամենայն սուրբք Աստուծոյ, դուք կապեցէք զկլանելն գողիս։»

Կամենալով խօսքը «Աղաւէս-Մաղաւէսի» վրա փոխել, հարցրի.

—Քեշիշ-բաբա, մի այդպիսի գիտութեան միթէ գիրք կայ։

—Բա՛լի, աղաս, կա՛յ, ինչպէս չէ, առանց գրքի չէ, ի հարկէ, բա՛ս,աղաս, կա՛յ....

—Քեշիշ-բաբա, վարժապետը շատ հետաքրքրվում է այդպիսի բաներով, մի բոպէ տեսնելու համար կարելի էր ձեզ խնդրել, որ ցոյց տայիք, ասեց Միրզա-Պետրոսը։

Քեշիշ-բաբան, փոքր ինչ դժուարութիւն յայտնելուց յետոյ, վերջապէս բանալին մօտեցրեց իր «միզի» արկղին։

Նեղ թղթերով լիքը արկղից նա հանեց մի թղաչափ երկարութեամբ, երկու մատ հաստութեամբ հին ձեռագիրը։

—Այս, աղա, դառնալով ինձ ասեց, «Հրեշտակաց» անուանեալ գիրքն է, որին այլ բառով կասեն՝ Աղա-ուէս-Մաղա-ուէս։»

Հին գրչագիրը չունէր յիշատակարան։ Մինչև կէսը մի մատնաչափ քառակուսիների մէջ դանազան անուններով հրեշտակներ և սատանաներ էին նկարված։ Նկարները գունաւոր էին և անվարժ ձեռքի գործ։ Նրանք ներկայացնում էին այն բոլոր գործողութիւնները, որոնց համար առհասարակ տգէտ ամբոխը դիմում է գրբացներին. մէկի հոգին առնում է հրեշտակը, միւսին բըժշկում է, երրորդին անտեսանելի է անում, չորրորդին չար աչքից և «նիաթից» պահպանում, հին-

դասերով ծանրաբեռնված, երրորդը անյարմար, չորրորդը, հայր Մելեանցը, որ իսպառ հրաժարվում է այդ տեսակ պաշտօնններից՝ երեսնամեայ գործունէութիւնից յետոյ հանգստանալու սաստիկ կարիք զգալով։ Կանոնաւորութեամբ ուրիշ եկեղեցու քահանայի չէ կարելի նշանակել, թէև չը կայ էլ այնպիսի արժանաւորը։

Նոր քաղաքագլխի ընտրութեան համար ծածուկ ժողովներ են լինում և զարմանալին այն է, որ այդ ժողովներում մաքուր խղճի տէր երիտասարդները իրանց թեկնածուի անունը պարզ տալիս են, նրա լաւ և վատ կողմերը անաչառ քննում, ծանրու թեթև անում, իսկ դրամի ժանգերով ներկված հաստափոր և քսակաւոր վաճառականները բաւականանում են դրանց գաղտնիքները հրապարակ հանել տալով, վրաները քահ քահ ծիծաղելով, մի և նոյն ժամանակ իրանց գաղտնի թակարդները լարում են, ջրերը պղտորում են, որպէս զի ընտրեն իրանց ձեռնտու մարդկանց։

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, մայիսի 19-ին

«Մշակ» լրագրի № 48-ի մէջ տպած երեցփոխան պ. Յարութիւնեանցի պատասխանը ստիպում է ինձ գրելու հարկաւ հետևեալը։

Նախ՝ ինչպէս յայտնի է բոլոր հոգևորական դասին, եկեղեցու մղձին նախապէս՝ պատկանում է կղերական դասի իրաւասութեանը, և երկրորդ՝ եկեղեցու տնտեսական սպասաւորութեան, որովհետև ամեն օր մղձուն հրամայողները քահանաներն են։ Եւ նամակագրի առաջ բերած 1021 և 1028 յօդուածները վերաբերում են ոչ թէ մղձու արձակման հարցին, այլ՝ ծայրագոյն հոգևոր ատենին, արքեպիսկոպոսին և եկեղեցապահին։ Երկրորդ՝ ինձանից հիմնաւոր պատճառները լսելուց յետոյ՝ մղձու արձակման մասին համաձայնութիւն տուեց ինձ պարոնը։ Յետոյ, անցեալ ապրիլի 16-ին հրաւիրեցի նրան նշանակած օրը գալ եկեղեցի, ժամկոչից մոմի հաշիւն ստանալ, և յետոյ ճանապարհ գցել, յիշեցնելով նրան, որ նա ինձ հետ միշտ համաձայն է գտնվել այս բանում։ Սակայն վերջում նա հակառակեց մղձու արձակելուն։ Երրորդ՝ Նորաշէնի դպրոցի աւագ վարժուհին երբէք իմ խօսքով չէ բերել մէկ ուրիշ կնոջ։ Նա իբր ուսումնարանի կառավարող, իր յօժար կամքը բերում է դպրոցի համար սպասաւորող կին և պ. երեցփոխանի նախընթաց համաձայնութեամբ, ընակեցնում է եկեղեցում։ Չորրորդ՝ հիմնաւոր պատճառներ եղել են մղձու արձակման մասին և ես վաղուց այդ ասել եմ պ. երեցփոխանին, յայտնելով թէ նա անհնազանդ է և եկեղեցու գաւիթը անմաքուր պահող և անյարմար անձն է։ Եւ հինգերորդ՝ պ. երեցփոխը թող կարդայ Գէորգ Դ. կաթողիկոսից՝ աւագ քահանաներին չնորհած իրաւունքները, որոնք տպված են 1882 թ. «Արարատ» ամսագրի մէջ և կոչվում են. «Հրահանգ վասն աւագ քահանայից և պարտուց պաշտաման նոցա» և այն ժամանակ կը համոզվի, որ ես, ըստ զօրութեան դրա մի քանի յօդուածների, այլ և փոքր ի շատէ փորձառու լինելով, իրաւունք ունեմ «աջակցել դպրոցի հոգաբարձութեան, ի բարեկարգութիւն և ի յառաջադիմութիւն նորին»։ Թողնում եմ այն, որ ինձ իմ իշխանաւորից իրաւունք է տուած երբ կամենամ մտնեմ իմ եկեղեցու ուսումնարանը՝ յայցելութիւն։

Նորաշէնի Սբ. Աստուածածին եկեղեցու աւագ քահանայ՝ տէր-Գէորգ Տէրտէրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկուշաբթի առաւօտ, մայիսի 29-ին, «Մշակի» խմբագիրը ուղևորվում է Բաթումի ճանապարհով Պարիզ, որպէս «Մշակ» լրագրի ներկայացուցիչ՝ մասնակցելու գրողների և մամուլի միջազգային կօնգրէսին, որին ներկայ գտնվելու համար նա, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, դեռ անցեալ տարի հրաւէր էր ստացել։ Խմբագրի մի երկու ամսվայ բացակայութեան ընթացքում մեր լրագրի ժամանակաւոր խմբագիր հաստատված է, խմբագրութեան առաջարկութեամբ, պ. Յովհաննէս Տէր-Մարկոսեան, որը տասն տարուց աւելի է «Մշակի» մշտական աշխատակից է եղել։ Պարտաւորութիւն ենք համարում յայտնել, որ խմբագրի ճանապարհորդութեանը նիւթականապէս նպաստում է Թիֆլիսի հասարակութեան այն մասը, որը յատկապէս համակրում է «Մշակին»։ Պարիզ հասնելուն պէս Գրիգոր Արծրունի կը սկսի այնտեղից թղթակցել «Մշակին» թէ կօնգրէսների և թէ համաշխարհային ցուցահանդիսի մասին։

—

Մի քանի բուն խմբագրական և տպարանական հանգամանքների պատճառով «Մշակի» № 58 չը կարողացանք հրատարակել հինգշաբթի օր, այլ հրատարակում ենք այդ համարը այսօր, շաբաթ օր։

—

Խնդրում ենք մեր բաժանորդներին ուղարկել խմբագրութեանը «Մշակի» բաժանորդագինը։ «Մշակի» կէս տարվայ բաժանորդագրութիւնը բացված է։ Վեց ամսով «Մշակին» գրվելու համար պէտք է վճարել 6 ռուբլի։

—

Մարդասիրական ընկերութեան յօբելեանի մասին ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ամսիս 21-ին այստեղ հանդիսաւոր կերպով տօնվեց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ յօբելեանը։ Հանդէսը կատարվեց ուսումնարանի բակում, որը պ.պ. Բաղիրեանցի և Ղուկասեանցի չնորհով գեղեցիկ կերպով զարդարված էր։ Յօբելեանին ներկայ էր մեծ բազմութիւն՝ թէ կանանց և թէ մարդկանց. ներկայ էր և քաղաքագլուխը։ Հանդէսը բացվեց պ. Նախադահի մի փոքրիկ ճառով, որին հետևեց ռուսաց «Боже Царя храни» հիմնը։ Դրանից յետոյ կարդացվեցին ընկերութեան կարճ պատմութիւնը, ճառեր և զանազան տեղերից ստացված բաղմաթիւ հեռագիրներ և ուղերձներ։ Ընթերցմունքներին հետևում էր պ. Կարա-Մուրզայի 150 հոգուց բաղկացած խմբի ներդաշնակ երգեցողութիւնը. խմբին մասնակցում էր և հայկական երաժշտական խումբը։ Ուշադրութեան արժանի էր յօբելեանի առիթով պ. Կարա-Մուրզայի յօրինած մարշը, որը շատ ներդաշնակ երգվեց։ Հանդէսը տեւեց մօտ երկու ժամ։ Ապա հասարակութիւնը դիմեց դպրոցի դահլիճը աշակերտուհիների ձեռագործ իրերը տեսնելու և գնելու։ Այս տարվայ չքեղ ձեռագործութիւնը իր վրա առանձին ուշադրութիւն էր դարձնում և հէնց այդ պատճառով էլ ժողովուրդը յափշտակված առնում էր։ Վաճառումից զոյացաւ 500 ր.։ Այդ օրը եկեղեցում պատարագ կար, որից յետոյ կատարվեց հանգուցեալ բարերարների համար հոգեհանգիստ, իսկ Կայսր Ալէքսանդր III կենաց համար մաղթանք»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ամսիս 21-ին երեկոյեան տեղիս քաղաքային այգում կայացաւ մի ժողովրդական զբօսանք յօգուտ Մարդասիրական ընկերութեան. ներկայ էր ահագին բազմութիւն։ Այգին լուսաւորված էր էլէկտրական լոյսով և ածում էին զինուորական և ասիական երաժշտական խմբերը։ Զբօսանքից մուտք զոյացաւ 1,500 ռուբլ։ Ամսիս 22-ին ցիրկի բեմում հայ սիրողները ի պատիւ Մարդասիրական ընկերութեան ներկայացրին «Նինոյի նշանվիլը» և «Էս էլ քի մօցիքլութիւն»։ Խաղը ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա. երևում էր, որ սիրողները բարեխղճութեամբ են վերաբերվել դէպի գործը։ Լաւ էին իրանց դերերում տիկիններ Պապօվեանց, Կաճկաճեան և Եւանդուլեանց, որոնց հասարակութիւնը մի քանի անգամ կանչեց բեմը։ Լաւ էին նոյնպէս և պ.պ. Պապօվեանց, Թէյմուրազեանց, Գիւլմէրեանց և Կաճկաճեանց։ Մուտքը 500 ռուբլուց աւելի է։»

—

Իշխան կառավարչապետի դէպի Երևան, Էջմիածին և Նախիջևան ուղևորութեան մասին Աղստաֆայից, մայիսի 17-ից մեզ գրում են. «Երէկ առաւօտեան ժամը 10-ին իշխան կառավարչապետ Դօնդուկով-Կորսակով անցաւ Աղստաֆայով։ Իշխան կառավարչապետի յատուկ կարգադրութեամբ կայարանում ներկայացրին նրան այն խումբը, որը կալանաւորեց այս քանի օրերում Ղազախի նահանգում սարսափելի աւազակութիւններ անող ղազաղների խմբին, նրանցից մի քանիսին էլ սպանելով։ Նա իր ձեռքով այդ մարդիկներին բաժանեց արծաթեայ և ոսկէ մէդալներ. իսկ այն մարդուն, որի տանը աւազակները գտնված ժամանակ եկել իմաց էր տուել կառավարութեանը, իշխան կառավարչապետը տուեց մի մեծ ոսկեայ մէդալ։ Նա չնորհակալ եղաւ նրան իր այդ վարմունքի համար և առաջարկեց, որ այսուհետև ամեն մի ղազախ-չամչադինցի հետևի նրա օրինակին. նա ասեց, որ ամօթ է այդ դաւառի համար, որ տարիների ընթացքում նա տեղ է տալիս, պահում և մնուցանում է այդպիսի աւազակային խմբերին, որոնց գոյութիւնը ամբողջ շրջակայքի համար անտանելի է։ Երբ դուք այսուհետև մի և նոյն օրինակով կօգնէք կառավարութեանը այդպիսի վնասակար անձինքներին ձերբակալ անելու, ասեց իշխանը—այն ժամանակ ես ձեր այդ ծառայութիւնը ի նկատի կունենամ և աւելով կը վարձատրեմ։ Իշխան կառավարչապետը ճաշեց կայարանի կառավարչի տանը և երկու ժամի չափ հանգստանալուց յետոյ ճանապարհ ընկաւ դէպի Երևան և Նախիջևան։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Եթէ Վաղարշապատում մի ուրախալի երևոյթ կայ այսօր, այդ այն ժողովն էր, որ տեղի ունեցաւ ամսիս 14-ին, տեղիս օրիորդական դպրոցի դահլիճում։ Ժողովում, որին նախագահում էր Գրիգոր քահ. Տէր-Գրիգորեան, ներկայ էր և բժ. Բագրատ Նաւասարդեան, որ մօտ օրերումս կարճ ժամանակով եկել էր հայրենիք. նա ցանկութիւն յայտնեց և Վաղարշապատում բանալ «Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան» տեղական ճիւղը։ Ժողովականները ուրախութեամբ և համակրութեամբ վերաբերվելով այդ բարենպատակ գործի ակզբնաւորութեան և ամենայն յօժարութեամբ վճարելով տարեկան անդամակցական հինգական ռուբլի, 40 անձինք ստորագրեցին՝ դիմելու Թիֆլիսի ընկերութեան խորհրդին, նրա համակրութիւնը ստանալու համար։ Ուրախութեամբ յայտնում եմ, որ մեր նշանաւոր դրամատուրգ պ. Գ. Սունդուկեան, որ նոյնպէս կարճ ժամանակով եկել է Էջմիածին, պատւեց այդ ժողովը իր ներկայութեամբ և անդամակցութեամբ։ Պ. Սունդուկեան բաղդաւոր համարեց իրան, որ կարողացաւ ներկայ լինել այդպիսի մի բարենպատակ գործի սկզբնաւորութեան։ Ժողովականները ոգևորվեցին և ընդունեցին պ. Սունդուկեանին ծափահարութեամբ և կեցցէներով։ Այդ ժողովին ներկայ էին և անդամակցեցին՝ սինոդի պրոկուրորի պաշտօնակատար պ. Կ. Իզբաշեան, ճեմարանի տեսուչ պ. Նահապետեան ճեմարանի ուսուցչական խմբով, բժ. պ. Անդրէասեան և ուրիշ անձինք»։

—

Թիֆլիսի քաղաքային դումայի մայիսի 22-ի նիստում, ի միջի այլոց, քննվեց Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Եանովսկու գրութիւնը Թիֆլիսի արական պրոգիմնազիային դրամական նպաստ հատկացնելու վերաբերմամբ։ Այդ հարցի մանրամասնութիւնները յայտնի են։ Դուման, ինչպէս յայտնի է, իր նախկին նիստերից մէկում որոշել էր, որ պատրաստ է դրամական օգնութիւն անելու, եթէ Թիֆլիսի կառավարչական դպրոցներում պարտաւորեցուցիչ առարկաների թւում կը դրվեն հայոց և վրաց լեզուները։ Այդ մասին պ. հոգաբարձուն տեղեկացրել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, և մինիստրը, կոմս Դէլիանով, պատասխանել է, որ դուման, քննելով այդ լեզուների դասաւորութեան գործի հարցը Թիֆլիսի կառավարչական դպրոցներում, դուրս է եկել իր իրաւասութեան սահմաններից։ Պ. մինիստրի այդ նկատողութիւնը ուսումնարանական շրջանի հո-

---

գերորդին գժվացնում կամ պապանձեցնում և այլն և այլն։

Նկարների հանդէպ երկայն քառակուսիների մէջ գրված էին բացատրութիւնները։

—Այս բացատրութիւններն են, հարցրի։

—Հրամանքս, աղա, բայց այդ պատկերների իսկական բանալին կորել է, արդ (յայտ) անեմ հրամանոցդ, նուաստիցդս ծածուկ գողացան։

Եւ յետոյ պատմեց ինձ թէ ինչպէս մի ժամանակ Թաւրիզի աւագ քահանայ տէր-Օսէփը հիացած էր այդ բացատրութեամբ, եպիսկոպոսի մէկը ուզել, խնդրել էր, ինքը չէր տուել, վերջը ուրիշի միջոցով ձեռքից խլեցին, առանց էլ ասելու թէ ում վրա է կասկածում *)։

Այժմ առաջ կը բերեմ թէ այդ և թէ այլ խնդիրների մասին մեր ունեցած խօսակցութիւնը։ Նիւթը զուցէ այնքան հետաքրքիր չէ, որքան պատմելու ինքնուրոյն ձևը, որը բառ առ բառ կը ներկայացնեմ, քանի որ յիշատակարանիս մէջ Քեշիշ-բաբայի խօսքերի ուրուագիծը թարմ տրպաւորութեան տակ գրելով շղթայեցի։

—Տէր-Օսէփը ասում ա, ջանըմ, էս ինչպէս բան ա։ Բալի ասեմ, էտպէս ա կասեմ։ Հալա ձեր խելքը չէ կըտրում.... Պարսիկների հետ էլ շատ կը խօսեմ։ Կը տեսնեմ նրանք էլ էս քանքարից խաբարութիւն չունեն։ Անցեալները մի սէյիդ, ծանօթ կրօնաւոր ա, ինձ ասում ա «Քեշիշ, ջանըմ, բու նեղանն դըր քի շէյթան սիղինան չօխ դոստ դէր», լեզուն հրամանքդ հասկանում էք ախըր, եանի այսինքն թա՝ «ինչ պատճառանօք սատանան ձեզ հետ շատ բարեկամ ա»։ Բալի, կասեմ. «Աղա, շէյթան շէյթաննան կորխար», կասեմ. «ճշմարիտ ա, աղա, սատանան սատանայից ախըր վախում ա»։ Գլուխ ընկաւ ծիծաղեց, թա. «Մաշալլահ, մաշալլահ, Քեշիշ-բաբա, սաղ օլասան»....

Խրախուսված մեր ծիծաղով և հպարտանալով՝

—Բաս, աղա, ես նրանց հէրը գեօռլեցը (գերեզմանից) կը հանեմ....

Նրան այդ ժամանակ ծիծաղելով ծխախոտ առաջարկեցի և ապա ցոյց տալով թուանշաններով գրված կոպիտ թղթի մի նեղլիկ կտորը՝ հարցրի.

—Այս թուերը ինչ են նշանակում։

—Բաս, բաս, բոլորը ծածկեալ թւով ա։ Պէտք ա, աղա, իմանաք, թէ Անանիա Շիրակացին ինչ կերպի բաներ ա գրէ։ Ինչ որ զարմանալին գրում ա, բոլորը բնական օդի ձեռքով ա *).... աղա, սարը արա, հրամանոցդ արդ անեմ....

Ցոյց տալով թուերը

—Ա՛ղա, դիմ, լիւն, յի.... վեվ... էս մէկ ա.... դա, խէ, նա.... տիւն, էս էլաւ էրկու, էտպէս չի։

—Շատ զարմանալի բաներ են, ասեցի, ծիծաղլս զսպելով։

—Սոնք, աղաներըս, մեծ մեծ բաներ ա, թէ որ էս մանդիլով (ուղղութեամբ) դնացիր... կը գնաս, կը հասնես.... ը... ը.. տէր-Օսէփը ասաւ խօսք չունիմ, իրաւունքը քոնն ա.... ը... ը.... հա, հալա մին ձեր հրամանոց սիգարը քաշեմ.... բալի, աղաներս, էն էի աղաչում որ, էս բանը առաջ Պիթագորոսն ունէր, յետ նորա Դաւիթ փիլիսոփան, յետ սորա Անանիա Շիրակացին.... յետոյ էս աւանակները, երևում ա որ ախըր էշիցն են ծնվել, ասում են թա ստոնք, որպէս թէ կախարդութիւն ա։ Սոնք լսելուն պէս զրկում են թէ սրբազանը քեզ կանչում ա։ Վերկացայ գնացի, տեսնեմ ինչ խաբար ա...

—Ո՞ր սրբազանը, հարցրեց Միրզա-Պետրոսը։

—Էն անցեալ թիմբաթիւնը.... նուաստը էս բաներից տեղեկութիւն ունիմ.... Վերջապէս աղա.... Հրեշտակաց գրքի բանալին տեսան.... շատ խնդրեցին չը տուի, որ չը տուի յետ նորա գողացան ձեռքիցս։

Յետոյ ակնոցները ուղղելով և կրկին թղթի թուերը ցոյց տալով.

—Դիմ, լիւն, յի... վեվ.... այսինքն՝ եկամ խաչվամ.... էնքան որ աղաչեցի ինչ ա դուս գալիս.... Էն Աստուած աղաչէ, եանի նորանից խնդրի.... հիմի մի էութիւն կայ, թէ ոչ.... յետ որա՝ Աստուածածնեալին Է-ն է, այսինքն թէ էութիւնից ծնվածը Է-նա.... աղա, հիմի հասկացաք ըղդամի զօրութիւնը։

—Աջաբ դեարիբա (շատ տարօրինակ) բաներ ես հարցնում, ախար օրհնված հոգի, այդ խրթին բաները հասկանալ կը լինի, ասեց Միրզա-Պետրոսը։

—Բաս, բաս, աղաներս, հոգիս ա գնացել, կեանքս ա փչացել.... ախար մենք ամենքս էլ ցանկութեան որդի ենք...

Գլուխը բարձր և բաղկատարած՝

—Տէր Աստուած, որ ցանկութիւն չը լինէր, մենք որտեղից կը լինէինք.... թէպէտ այսպէս էլ վարդապետութիւն անում են.... որպէս թէ մեր զոյութիւնովը Աստծոյ ինչը աւելացաւ, ինչը պակասեց.... բայց էութեան խորհուրդը անքննելի ա։

Դառնալով ինձ՝

—Աղա, անուններդ ինձ բախշէք։

Ցայտնեցի։

—Բեալի աղա, ըղդամի իմաստութիւնը անըմբռնելի ա.... ամմա իմաստութեան գիտութիւնն էլ մեծ շնորք ա.... Տէր-Օսէփը մնաց բերանը բաց.... ջանըմ, ասում ա, ախըր էս ոնց գրված

---

*) «Միրզա-Թեոս» «Մշակ» № 42—45։

**) Այսինքն՝ ֆիզիքայի։

զաբարձուի կողմից հաղորդված լինելով քաղաքագլխին, առիթ տուեց դումային քննելու այդ հարցը։ Ձայնաւոր իշխան Բէհբուտեան այն միտքը յայտնեց, որ քաղաքային պլօժէնիայի զօրութեամբ, մինիստրը չէ կարող քննել քաղաքային դումայի գործողութիւնները, և առաջարկեց գանգատվել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի դէմ կառավարիչ սենատին։ Կարճատև վիճաբանութիւններից յետոյ, քաղաքագլուխը քուէարկութեան դրեց երկու հարց՝ ընդունել գանգատը առաջարկը և այնպէս անցնել հերթական հարցերին, թէ՝ ուղղակի անցնել հերթական հարցերին։ Ձայնաւոր Նիկոլաձէ խօսեց յօգուտ վերջին ձևակերպութեան՝ առաջարկելով ուղղակի հերթական հարցերին անցնել։ Դուման ձայների առաւելութեամբ վճռեց՝ ուղղակի անցնել հերթական հարցերին։

—

Ցօգուտ Բաֆֆիի գրքերի հրատարակութեան ստացանք պ. Միքայէլ Կամսարականից 5 ռուբլի։

—

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան արդիւնաբերական-գիւղատնտեսական ցուցահանդիսին մասնակցող ցանկացողների թիւը բաւական մեծ է և այդ պատճառով, ինչպէս երևում է, ցուցահանդիսի կարգադրիչ մասնաժողովը սոսկալի մեծ տեղի վերաբերութեամբ աւելի մեծ պատրաստութիւններ տեսնելու, քան թէ ենթադրվում էր։

—

Պարսից Շահը, որ սիրալիր կերպով շատերին վարձատրում է զանազան շքանշաններով, «Առիւծի և Արեգակի» II կարգի շքանշան է շնորհել և Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Մատինովին։

—

Մեզ ուղարկված է դոկտոր Նիմայերի մի փոքրը աշխատութեան հայերէն թարգմանութիւնը, որը վերաբերում է «Կիրակի օրվայ հանգստութեանը և նրա նշանակութեան առողջապահական տեսակէտից»։ Գրքի հեղինակը կողմնակից է կիրակի օրը պարապ մնալուն, իբրև մի մեծ նըպաստ առողջապահութեան, և մարդկանց ֆիզիկական և մտաւոր ոյժերի կազդուրվելուն։ Գրքի հայերէն թարգմանութիւնը պատկանում է բժիշկ Մ. Զարգարեանցին։ Այդ թարգմանութիւնը ըսկզբում մաս մաս տպագրված է եղել «Արարատ» ամսագրում, իսկ այժմ առանձին գրքոյկով տըպագրվելով, վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում և գինն է 30 կոպէկ։

—

Կիրակի օր, մայիսի 28-ին, ազնուականների բանկի թատրոնում հայերէն մի ներկայացում պիտի տրվի, մասնակցութեամբ սիրողների և մշտական խաղացողների։ Այդ ներկայացումը տրվում է երիտասարդ երգիչ պ. Վարդիկեանի օգտին, որ շուտով պ. Ալէքսանդր Մանթաշեանի հաշվով ուղևորվելու է Իտալիա երգեցողութիւն սովորելու համար։ Պ. Վարդիկեան—տենօր է, ունի թէև փոքրիկ, բայց դուրեկան ձայն։ Նա մի քանի տարի է արդէն սովորում է Թիֆլիսի երաժշտական դպրոցում. նրա ձայնը լսողները հաստատում են, որ ուսանելով և մշակելով իր ձայնը՝ երիտասարդը ապագայում կարող է աջողութիւն ունենալ։ Այդ պատճառով շատ ցանկալի է, որ հասարակութիւնը թատրոն գալով՝ իր կողմից նիւթականապէս օգնէր երիտասարդին, որը ձգտում է կատարելագործելու իր ձայնը, բայց կարօտ է զրամական օգնութեան։ Այդ տեսակ օգնութիւն,—հասարակութեան համար պատուաբեր գործ է։

—

Մեզ խնդրում են հրատարակել հետևեալը. «Շուտով կը տպագրվեն Կօջօրի հայոց եկեղեցու շինութեան պատմութիւնը և հայ-ժողովրդի տասնամեայ նուիրաբերութիւնները յօգուտ տեղական երգեցիկ խմբի և արած ծախքերը նորա պահպանութեան և վարձատրութեան համար»։

—

Լօնդօնից հեռագրում են մայրաքաղաքի լրագիրներին մայիսի 16-ից հետևեալը. «Համայնքների ժողովում Ֆերգիւսըն յայտնեց, որ իրերի դրութիւնը Հայաստանում այնպէս վատ չէ, ինչպէս ներկայացնում է Բրայս։ Դժուար է Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին համոզել Բ. Դրանը առաջադրութիւններ անելու, իսկ Անգլիան միայնակ գործել չէ կարող։ Սակայն Անգլիան ոչ մի դէպք ձեռքից բաց չի թողնի Բ. Դրան բարեկամական առաջադրութիւններ անելու»։

—

«Արևելքի» մէջ կարդում ենք. «Պ. Ադամեան երէկ, մայիսի 3-ին, մեկնեցաւ յիզմիր, ուր թատերական վեց ներկայացում պիտի տայ։ Իրեն կընկերակցի պ. Վրոյր, իսկ խմբին մնացեալ մասն արդէն կազմ և պատրաստ կը գտնուի Իզմիր։ Եղած կարգադրութեանց համաձայն, պ. Ադամեան յառաջիկայ շաբաթ իրիկուն, 6—18 մայիս, իր ներկայացմանց շարքը պիտի սկսի «Օթիելլոյով», որուն համար հարկ եղած պատրաստութիւնները տեսած է արդէն պ. Մաղաքեան, որ երկու շաբաթէ ի վեր անդ կը գտնուի»։

—

Թէ ինչ «վարք ու բարք» է տիրապետում Կ. Պոլսի ազգային ժողովը ղեկավարող էֆէնդիների մէջ, այդ պարզ երևում է նրանից, որ ազգային ժողովի վերջին նիստերից մէկում Նուբեան էֆէնդին հրապարակով դավաճանելով Վանի նախկին առաջնորդ Պօղոս եպիսկոպոսին, խորին վիշտ է յայտնել նրան Վանի առաջնորդական պաշտօնից հեռացնելու առիթով։ Պօղոս եպիսկոպոսի քաջագործութիւնները յայտնի են։ Գտնվել մի այդպիսի մարդու, ցաւել նրա անկման վրա, և այն էլ ազգային ժողովում, կարող է միայն այն մարդը, որ ոչ խիղճ և ոչ էլ ամօթ ունի....

—

Բագուի «Մարդասիրական ընկերութեան» 25-ամեայ յօբելեանը շնորհաւորելու նպատակով, մայիսի 21-ին, «Մշակի» խմբագրութիւնը շնորհաւորական մի հեռագիր ուղարկեց ընկերութեան խորհրդին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ, պ. Իսահակ Մէլիք-Աղամալեան խնդրում է մեզ յայտնել, որ սխալ են Երևանի քաղաքագլխի պաշտօնի համար իր թեկնածութեան մասին լուրերը։ Ինչպէս նա անցեալ տարի արդէն հրաժարվեց քաղաքագլխի պաշտօնի համար քուէարկվելուց, այնպէս էլ այժմ հրաժարվում է այդ պատուից։

—

ԲԱԳՈՒԻՑ կրկին ստացանք պ. Ալէքսանդր Աբելեանցից 17 ռուբլի Բաֆֆիի գրքերի հրատարակութեան օգտին։ Այդ փողը պ. Աբելեանց հանդանակել է մի քանի անձանց մէջ։

—

Մեզ գրում են Կ. Պոլսից հետևեալը։ «Թիւրքաց հանքերի և անտառների ընդհանուր վարիչ, Պետրոս էֆենդի Քուլումջեան, որը մի և նոյն ժամանակ Կ. Պոլսի հայ-կաթոլիկների նորակազմ վարչական ժողովի անդամ է, այս օրերս ստացել է Մէջիդիէի առաջին աստիճանի բարձր շքանշանը։»

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են, որ հայոց Բարեգործական ընկերութեան Բաթումի ճիւղի մէջ կան այժմ թէ հայ-կաթոլիկներ և թէ մի հայ-բողոքական։ Անցեալ ամսվայ ընդհանուր ժողովին մասնակից էին և երեք տիկիններ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինից հեռագրում են, որ այնտեղի լրագիրները քննելով Բէլգրադում տեղի ունեցած խառնակութիւնները, այդ բոլորի մէջ մեղադրում են գլխաւորապէս առաջաւորներին, որոնք առաջինն էին ամբոխի վրա ատրճանակներ արձակողը։

—Ֆրանսիական պատգամաւորների վերջին ժողովներից մէկում, երբ խօսք եղաւ բարձրագոյն ատեանի մասին, Կասանեակ տաքացած կերպով խօսելով այդ մասին, ասեց, որ բարձրագոյն ատեանը մի արատ է արդարադատութեան համար։ Ժողովը հաւանութիւն տալով բարձրագոյն ատեանի գործողութիւններին՝ վճռեց հերթական հարցերին անցնել։

—Անգլիական լօրդերի ժողովը ընդունեց նաւատորմը մեծացնելու առաջարկը։

—Իտալիայի մի քանի կողմերում շարունակվում են հողային խառնակութիւնները գիւղացիների չրջանում։ Խառնակութիւնների տեղը զօրք է ուղարկված կառավարութեան կողմից. մի քանի տեղերում կարգը արդէն վերականգնված է։ Տեղեկութիւններից երևում է, որ այդ չարժումների ղեկավարների մէջ եղել են և մի քանի իտալացի յեղափոխականներ, որոնք ապրում են արտասահմանում։ Կառավարութիւնը միջոցներ է որոնում գիւղացիների հողային հարցը աւելի բարւոքելու, որպէս զի այդ տեսակ չարժումների առաջը դրանով առած լինի։

—Գերմանական ըէյխստագի անդամներից շատերն էլ յետ չեն մնացել Իտալիային բարեկամական ցոյցեր անելուց։ Բերլինից հեռագրում են, որ նրանք ի պատիւ մինիստր Կրիսպիի ճաշ տուին այնտեղի հիւրանոցներից մինում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՐԻԳԱ, 22 մայիսի։ Այսօր տեղի ունեցաւ այն մատուռի հիմնարկութիւնը, որը կառուցվում է ի յիշատակ Նոցա Կայսերական Մեծութիւնների և Օգոստափառ որդոց փրկութեան՝ 1888 թուի հոկտեմբերի 17-ին թագաւորական գնացքի խորտակման ժամանակ։

ՎԻԵՆՆԱ, 22 մայիսի։ Աւստրիական կայսրը մտադիր է այցելել Բերլինը օգոստոսի սկզբին։

ԲԷԼԳՐԱԴ, 22 մայիսի։ Հրատարակված է ուկազ այն մասին, որ կառավարութիւնը իր ձեռքն է առնում սերբական երկաթուղիները բանեցնելու գործը։ Ձեռք առած այդ միջոցի պատճառաբանութիւնը այն է, որ երկաթուղային ընկերութիւնը իր զեղծումներով և ճանապարհները պահելու վերաբերեալ անճշդութեամբ խախտել է կառավարութեան հետ կայացրած համաձայնութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մայիսի։ Մեծ Իշխան Պավէլ Ալէքսանդրովիչ իր սվիտայով Պետերբուրգից ուղևորվեց Վարշավա՝ դիմաւորելու յունաց թագաւորական զոյգին, իսկ Ջերնօգորիայի իշխան Նիկոլայ, Միլիցա իշխանուհու հետ միասին ուղևորվեց Կիէվ։ Կայարանում իշխանին ճանապարհ էին գցում մեծ իշխանները և սլավոնական ընկերութիւնը՝ գեներալ-ադիւտանտ Իգնատիեվի առաջնորդութեամբ։ Ընկերութեան կողմից կը կարդացվի մի ոտանաւոր՝ «Ռուսաստանը Ղարաղաղին» (Ջերնօգորիային)։

ԲՈՒԴԱ-ՊԵՇՏ, 23-ին մայիսի։ Երէկ պատգամաւորների ժողովում տեղի ունեցան խիստ յարձակումներ Տիսայի վրա.—Իրանի ասեց, որ ապագայ սերունդը Տիսային կանոնի ընտրողական զեղծումների և բարքերի ապականութեան մինիստր։ Երեկոյեան կառավարչական կուսակցութիւնը ի պատիւ Տիսայի բանկետ կազմեց, իբրև համակրական ցոյց։

ՆԻԻ-ԵՕՐԿ, 23 մայիսի։ Տեղեկութիւններին նայելով, Ջօնատօնում և չրջականներում եղած հեղեղներին զոհ են գնացել 10—12 հազար մարդ. արդէն ջրի տակից դուրս են բերված մի քանի հազար դիակներ։ Ջուրը պակասում է։ Կողոպտողների մի խումբ, որը բաղկացած է գլխաւորապէս լեհացիներից և ունգարացիներից, կողոպտում են մեռածներին։ Այդ կողոպտողների վրա գործադրվեց Լինչի օրէնքը։ Փրկվածները շատ մեծ նեղութեան մէջ են՝ ապրուստի միջոցներ չունենալով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի։ Իրկուտսկի նահանգապետի պաշտօնակատար Կոլէնկօ նշանակված է Եակուտսկի նահանգապետ։

ԲԷԼԳՐԱԴ, 24 մայիսի։ Միտրոպոլիտ Միխայիլ և Երօնիմ եպիսկոպոսը, ուրիշ հոգեորական ան-

---

բան ա.... Կասեմ տէր-տէր, կենաց վաչն եմ, որ եկամ.... գիմ՝ եանի—որ... վէվ—եկաւ. եկամ խաչվեմ.... Էսպէս շատ բաներ կայ, ամմա.... ստոնց բանալին չը կայ. կիսատ էսպէս մնացել ա.... ախբը էս բանալիով ա որ փիլիսոփայք իրանք ամեն բան իմացան.... երբ որ էս բոլորը յայտնվեցաւ հրեշտակա, հրեշտակները անդոհ եղան.... թէ էս ինչ գիտութիւն ա, որ մեզ անհանդիստ կը թողան.... էնդուր ա որ փիլիսոփայք ծածկան էս գիտութիւնը.... ցակոբ-աղա, մեծ գիտութիւն ա.... ամմա ինչ կանես որ բանալին կորաւ։

—Կորաւ, դտէք ասեցի։

—Աղա՛ս, լաւ ես ֆարմայիշ անում (հրամայում), ամմա էլ ինչպէս....

—Այնպէս, ինչպէս դտաք այժմ այն պարսիկ կնոջ մատանին։

—Քեշիշ-բաբա, մոռացել ես, որ Աւետարանը ասում է. «բժիշկ բժշկեա նախ զանձն քո», աւելացրեց խսկոյն ծիծաղելով Միրզա-Պետրոսը։

Քեշիշ-բաբան այս անսպասելի հարուածից ուղղվելու համար, նախ խորհրդաւոր կերպով գլուխը վեր ու վար շարժեց և ապա հանդած «սիգարը» լուռ շրթունքներին մօտեցնելով

—Աղաներս, ասեց, սարբ արէք մի սիգարս վառեմ....

Վառելով և ժամանակ վաստակելով

—Ղաբուլ եմ (համաձայն եմ), ղաբուլ եմ՝ աղաս, բայց ամմա.... բըղամի նշաններըմ, աղաներս, մարգարէական մեծ զօրութիւն ունին.... բըղամը յայտնում էր, որ կորուստը անդառնալի ա.... բալի, աղա, ազատական մեծ բայատրութիւն կուղի բըղամը.... տես, Աստուած աղեղն է.... էստեղ մի պտուտ կայ.... վաչը էն ա, որ պըտրտեց.... պըտրտեց ախար.... ինչ արդ անեմ ձեր հրամանոց, էտ մարգարէութիւնից միտքս չփոթութեան մէջ ա....

—Ինչո՞ւ, հարցրեց Միրզա-Պետրոսը։

—Ժամանակ չնորհեցէք, աղաներըս, արդ անեմ.... Քանի ժամանակ ա, որ նուաստս յայտնութիւն կայ.... փառք Քեզ ողորմած թագաւոր, բալի խաբար կայ, որ Աստուած-Որդին՝ էն՝ չըրջում ա....

—Ո՞րտեղ է չրջում։

—Եկէ.... Միրզա-Պետրոս... պըտրտում ա հրեշտակաց հետ միասին հրեղէն արեգակի վրա....

—Այդ ինչպէս իմացաք,—հարցրի։

—Ձեր հրամանոց ծառան, աղաս, էս բոլորից խաբարութիւն ունի, բալի, աղա, երկնային գործերից նուաստս խաբարդար ա....

Արդէն նհարի (ճաշի) ժամանակ լինելով, մենք հարկաւոր համարեցինք Քեշիշ-բաբային թողնել իր Է-ի յայտնութեամբ և մեկնիլ։

—Դեռ լաւ է, որ Քեշիշ-բաբան Պլիթագորասի և Շիրակացու անուններն էլ գիտէ, ասեց ինձ Միրզա-Պետրոսը, բայց այնպիսիները կան Թաւրիզում և Թաւրիզից դուրս, որ հաղիւ թէ կարդալ ու գրել էլ գիտեն, մանաւանդ պարսիկների մէջ. երբ պարսից թագերին ծանօթանաք, գուք դրանց համարեա ամեն փողոցում պիտի հանդիպէք։

Եւ այս խօսքերից յետոյ իր յիշատակարանում անվարժ ձեռքով գրված երկու տողը ցոյց տալով՝

—Եթէ կարող էք, ասեց, կարդացէք և իմացէք, թէ ինչ է նշանակում այս։

Կարդացի. «դր. վրթ. ախնօ. քօ. ար. նչին բրթան», բայց թէ ինչ է նշանակում, չը կարողացայ հասկանալ։

—Սակայն այսպէս գրողը, շարունակեց Միրզա-Պետրոսը, որ Շարայի ախորժակով երկու հաւ, քառասուն ձու միանգամից ուտող մի հայ ակնաբոյժ է, այսօր իբրև գրքաց ևս մեծ հռչակ ունի Թաւրիզի չրջակայ պարսից բոլոր գիւղերում։

Ահա թէ ինչպէս։

Մնահաւատ գիւղացիներից մէկը, ուրիշից խաբվելով թէ ինչպէս, դիմում է այս ակնաբոյժին, խնդրում, աղաչում է, որ իր չքերը կնոջ համար սա մի փիթիկ (գիր, թուղթ) գրի։ Ի հարկէ, սա հրաժարվում է, բայց վերջապէս գիւղացուց ազատվելու հնար չէ լինում։ Սա էլ վերցնում հանքով մի թղթի կտորի վրա գրում է. «դր. վրթ. ախնօ. բրթան և այլն», որը հիմի տեսաք և որը նրա ձեռքով գրածն է։ Կոյր բաղդից տարին չը լրացած գիւղացին մի զաւակի հայր է դառնում։ Ընծայ ստացած ոչխարը մէկ կողմից, ստացած հռչակը միւս կողմից, ստիպում են խեղճ Շարային իր արհեստի հետ և գրքացութիւնը միացնելու այդ ժամանակից։

—Իսկ ինչ է նշանակում այդ դր. վրթ. ախնօ և այլն, հարցրի։

—Այդ նշանակում է,—ասեց ծիծաղելով Միրզա-Պետրոսը. «Ցուր որդի աղախնոյ Քո և արա առ իս նշան բարութեան»։

Սակայն չէ կարելի ուրանալ, որ Պարսկաստանի հաղարաւոր խաբեբաներից Քեշիշ-բաբան որոշվում էր նրանով, որ գրքացութեան վրա նայում էր, որպէս գիտութեան վրա։ Խեղճը, խաւարի մէջ գլուխը կորցնելով, լոյս էր որոնում և դառնացած էր սրտով, որ Շիրակացու գաղտնիքների մէջ թափանցելու համար անիծեալ բանալին պակասում էր։ Քեշիշ-բաբայի պէս մարդու հասարակ գրքացի դերը չը պիտի զարմացնի ոչքի։ Պարսկաստանում ամեն մի գրագէտ հեշտութեամբ գրքաց կարող է լինել։

Ց. Խօջամիրեան

ձանց հետ խորհրդակցելուց յետոյ, կառավարութեանը մի գրութիւն ներկայացրին, որի մէջ բացատրում են իրանց կարծիքը եկեղեցական հարցի լուծման վերաբերմամբ: Նրանք պայման են դնում՝ հեռացնել Մրաովիչին և եպիսկոպոսներին և պահանջում են կառավարութիւնից խոստմունք՝ առաջին սկուպչչինայում մի օրինագիծ առաջարկել կանոնական մտքով եկեղեցական օրէնքները փոփոխելու մասին: Վաղը կը կայանայ մինիստրների խորհուրդը այդ հարցը քննելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի: Կայսերական պալատը Գատչինայից տեղափոխվեց Նոր-Պետերգոф: —Ասում են, որ այսօր Նոր-Պետերգոփում տեղի պիտի ունենայ Մեծ Իշխան Գէորգի Ալէքսանդրովիչի ճանապարհ զցելը դէպի «Գենեռալ-ադմիրալ» նաւը, որով Նորին Բարձրութիւնը պիտի ուղևորվի Ատլանտեան օվկիանոսը:

ՊԱՐԻԶ, 24 մայիսի: Հռոմից եկած մասնաւոր տեղեկութիւնները հաստատում են այն լուրը, որ Իտալիայի և Գերմանիայի մէջ զինուորական դաշնակցութիւն է կապված: Այդ դաշնակցութեան զօրութեամբ իտալական զօրքը դրվում է նոյնպիսի պայմանների մէջ, ինչպիսի պայմանների մէջ գտնվում է բաւարական զօրքը: Հռոմում կը լինի գերմանական զինուորական պատգամաւորութիւն, իսկ իտալական զինուորական պատգամաւորութիւնը, որը թւով աւելի փոքր կը լինի քան գերմանականը, կը հաստատվի Բերլինում: Երկու պատգամաւորութիւնների նպատակը պիտի լինի միացնել գերմանական և իտալական զօրքը և նրանց մի տեսակ կազմակերպութիւն տալ՝ գերմանացի գեներալի հրամանատարութեան ներքոյ: Այդ դաշնակցութիւնը կապված է առանց Աւստրիայի մասնակցութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մայիսի: Զինուորական մինիստրը ուղևորվում է արտասահման բժշկվելու նպատակով: Նրա պարտաւորութիւնների ժամանակաւոր կատարումը յանձնված է գեներալ Օբրուչեվին: «Journal de St. Pétersbourg» զարմանք է յայտնում այն առիթով, որ օտար բորսաների տրամադրութիւնը յուզված է՝ ռուսաց սպառազինութեան մասին տարածված լուրերի առիթով, չը նայելով որ չափից դուրս շատ անգամ արդէն կրկնված է, որ Ռուսաստանի քաղաքականութիւնը բացառապէս խաղաղասիրական է, և բորսաները ամենից լաւ պէտք է իմանային, որ այն ժամանակ, երբ մեր ֆինանսական՝ վարչութիւնները գործադրում է իր ձեռնարկած մեծ օպերացիաները, Ռուսաստանից միանգամայն չեն կարող ստացվել այնպիսի լուրեր, որոնք կարող լինէին խախտել դէպի խաղաղութեան գործը ունեցած հաւատը: Ահա թէ ինչու այդ լուրերը կարելի է բացատրել միմիայն կուրսերը վայր գցելու նպատակով վերանորոգած խաղով:

ՊԵՏԵՐԳՕՖ, 25 մայիսի: Այսօր առաւօտեան այստեղ եկան ինստիտուտների և իգական գիմնազիաների այն աշակերտուհիները, որոնք իրանց դասընթացը աւարտել են ոսկի և արծաթի մէդալներով: Թագուհի Կայսրուհին ինքը իր ձեռքով բաժանում էր մէդալները աշակերտուհիներին:

ՍԷՎԱՍՏՕՊՕԼ, 25 մայիսի: Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաեվիչ մեկնեցաւ դէպի Պետերբուրգ արտաքնթաց գնացքով:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Մայիսի 23-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	95 ր.	25	»
Բերլինի վրա 100 մարկ —	46 »	45	»
Փարիզի վրա 100 ֆրանկ —	37 »	80	»
Ոսկի — արժէ —	7 »	63	»
Մաքսային կուպոններ —	152 »	25	»
Արծաթ — — —	1 »	13	»
Բորսային դիսկոնտներ —	5 և $6^1/_4$%		»
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99 »	25	»
— — — — 2-րդ —	99 »	25	»
— — — — 3-րդ —	99 »	25	»
— — — — 4-րդ —	99 »	25	»
— — — — 5-րդ —	99 »	25	»
— — — — 6-րդ —	99 »	25	»
Նոր 4%	85 »	12	»
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	99 »	50	»
— — 2-րդ —	99 »	25	»
— — 3-րդ —	99 »	50	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	271 »	—	»
— երկրորդ —	244 »	50	»
$5^1/_2$% րէնտա	103 »	12	»
Ոսկեայ րէնտա	172 »	25	»
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ.	139 »	—	»
Նոր երկաթուղային րէնտա	99 »	50	»
5% գրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդ. ընկ. մետ.	137 »	25	»
— — թղթադ.	94 »	37	»
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	98 »	25	»
Գիւղական բանկի	102 »	50	»
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	— »	—	»
— —Քութայիսի-18 և 43տ.	— »	—	»
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	94 »	75	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94 »	25	»
Օդէսայի — —	95 »	75	»
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	— »	—	»

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնն թոյլ է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆԸ

Սրանով տեղեկացնում է Թիֆլիսի պ.պ. տանտէրերին, որ 1889 թուականի մարտի 26-ին, ներքին գործերի պ. մինիստրը վաւերացրել է Թիֆլիսի կալուածները կրակից փոխադարձ ապահովութեան ընկերութեան կանոնադրութիւնը, որի 18 յօդ. հիման վրա, կանոնադրութիւնը վաւերացնելուց յետոյ քաղաքագլուխը հրաւիրում է տանտէրերին ժողովվել նրանց ցոյց տուած տեղը, խորհրդակցելու ընկերութեան գործունէութիւնն սկսելու մասին: Այդ հիման վրա սոյն մայիսի 28-ին, քաղաքային դումայի դահլիճում առաւօտեան ժամը 10-ին նշանակվում է առաջին ընդհանուր ժողով, ուր կարող են ներկայանալ այն ամենը, որոնք ցանկանում են ապահովել իրանց անշարժ կայքերը նորահաստատ ընկերութեան միջոցով: Այդ ժողովում, կանոնադրութեան 19 յօդուածի հիման վրա, պ. տանտէրերին կառաջարկվի մասնակցել փոխադարձ ապահովութեան և կը կազմվի ցանկացողների ցուցակը, որոշելով հանդերձ թէ նրանցից իւրաքանչիւրը որքան դումարի է կամենում ապահովել իր կայքը և դրանից յետոյ ժողովում կարող են մնալ միայն այն անձինք, որոնց անունները մտած են այդ ցուցակի մէջ. դրանցից ամեն մէկը ունի միայն մի ձայնի իրաւունք, ինչ դումարի որ դնահատած լինի իւրաքանչիւրն առանձին իր կալուածքը:

Կանոնադրութեան 22-րդ յօդուածի հիման վրա, եթէ կալուածների ապահովութեան համար առաջարկված դումարը հասնի 500,000-ի, այն ժամանակ այդ ժողովին մասնակցելու իրաւունք ունեն միայն այն տանտէրերը, որոնք կը վճարեն $^1/_4$% ապահովութեան առաջարկված կալուածների արժէքից: Կալուածների ապահովութեան ժամանակ այդ վճարները հաշվում են իբրև ապահովութեան վարձ—պրէմիա, իսկ աւելորդ դումարը, եթէ միայն լինի, կը վերադարձնվի տէրերին:

20-րդ յօդուածի մէջ ասված է—մի և նոյն կալուածի մի քանի տէրերը կարող են մասնակցել ընդհանուր ժողովում ունենալով իրանց կողմից միայն մի հաւատարմատար: Կանայք և առ հասարակ այն կալուածատէրերը, որոնք հնար չունեն մասնակցելու ժողովին, կարող են իրանց պատկանած ձայնի իրաւունքը հաւատարմագրով յանձնել ուրիշին: Խնամատարութեան տակ գտնված փոքրահասակների, հոգեկան և ֆիզիկական հիւանդների ձայնի իրաւունքը պատկանում է նրանց խնամակալներին և հոգաբարձուներին: Պետական, հասարակական և մասնաւոր հաստատութիւնները մասնակցում են իրանց հաւատարմատարների միջոցով:

Ծանօթութիւն. Մի անձն երկու ձայնից աւելի չէ կարող ունենալ, մէկն իր ձայը, իսկ միւսը հաւատարմագրով կամ իբրև խնամակալ կամ հոգաբարձու: Եթէ ժողովի մէջ առաջարկված կալուածների ապահովութեան դումարը ներկայանայ 500,000 ռուբլի, այն ժամանակ ժողովը կանոնադրութեան 22-րդ յօդուածի հիման վրա 1) ընտրում է ապահովութեան մասնակցողներից վարչութեան վերահսկող մասնաժողովի և վերաքննիչ մասնաժողովի անդամներ իրանց կանդիդատներով, գնահատողներ և ճարտարապետներ. 2) որոշում է այն դումարի քանակութիւնը, որը կը պահանջվի ընկերութեան վարչութեան ծախսերի համար. 3) որոշում է ընկերութեան յետագայ տարեկան ընդհանուր ժողովների կայանալու ժամանակամիջոցները:

Վերոգրեալի վրա աւելացնվում է, որ նորահաստատ ընկերութեան մէջ կայքեր ապահովելու համար տրվելիք յայտարարութիւնները և գնահատութեան համապատասխան $^1/_4$% վճարները ընդունվում են սոյն թուականից քաղաքային ուպրավայում մինչև առաջին ժողովի նշանակված օրը. մի և նոյն ժամանակ, սոյն տեղը ցանկացողները կարող են ստանալ և կանոնադրութեան տպագրված օրինակները: 1—1

Թիֆլիսի ազնուականների բանկի թատրոնում կիրակի, մայիսի 28-ին Պ. Մ. ՎԱՐԴԻԿԵԱՆԸ, մասնակցութեամբ օր. Ամիրեանի, պ.պ. Ամիրջանեանի, Պարոնբէգեանի, Բաշինջաղեանի, և դերասանական խմբի կը տայ I ՊՐԻԿԱՇՉԻԿԸ ՇԿԱՓՈՒՄԸ վօդ. 1 արարուածով, II ՉՆՉԻՆ ՀԱՃՈՑՔՆԵՐ վօդ. 1 արարուածով, III ՉԱՒԵՇՏ, IV Պ. Նկարիչ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԸ կը դնի ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐ Մովսէս Խորենացու ուրուականը: Սկիզբն է $8^1/_2$ ժամին: Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Ծատուրեանի, Սուքասեանցեանի և Տէր-Սարգսեանի մագազիններում: 1—1

Երկուշաբթի օրը, 29-ին մայիսի, առաւօտեան ժամի 11-ին, քաղաքային Դումայի դահլիճում տեղի կունենայ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՃՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ՝ քննելու համար ընկերութեան խորհրդի 1887 և 1888 թուականների հաշիւները, հաստատելու ընկ. Ախալցխայի տեղական վարչութեան այս 1889-ի նախահաշիւը և ընկերութեան Ախալցխայում բանալիք գրադարան-ընթերցարանի կանոնադրութիւնը: 1—1

Մայիսի 28-ին և 29-ին, կիրակի և երկուշաբթի օր, Ալէքսանդրեան այգիում տեղի կունենայ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ, ՎԻՃԱԿԱԽԱՂՈՎ, Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան միջոցները շատացնելու համար: Զբօսանքի սկիզբը՝ երկու օրն էլ, լինելու է ժամը 12-ին: Այգին բացանելու նշանը կը տրվի հրախաղութեամբ: Մանրամասնութիւնը աֆիշայով: 1—2

ԱԼԲԵՐՏԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

(Ժողովարանին կից)

Ստացված են մեծ քանակութեամբ ՓՈՒՔՍԵՐ ԽԱՂՈՂԻ ԱՑԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ, վերջին կատարելագործված սիստեմների համեմատ, պուլվերիզատորով և առանց դրան: Գները շատ չափաւոր են, և մատչելի ամենքի համար: 2—8

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Հինգշաբթի, յունիսի 8-ին, ՄԻՆԳՐԷԼԻԱ (MINGRÉLIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսուն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլոզլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Աբծրունի գալերէում, № 114. 1—2 (28· 3)

ՄԱՆԿԱԲԱՐՁ օր. Ս. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ այս օրերս մեկնելով արտասահման 4 ամիս ժամանակով, խնդրում է իր հիւանդներին, իր բացակայութեան ժամանակ, դիմել մանկաբարձ օր. ԽՕՋԱԷՆԻԱԹԵԱՆՑԻՆ, որը բնակվում է Երևանեան հրապարակի վրա, տուն Ծինամզղվարովի (Эриванск. площадь, домъ Цинамзгварова). 3—4 (Ե. Հ.)

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ՍՕԼՕԼԱԿ, ԳԱՆՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՇԱՀՆԱԶԱՐՕՎԻ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադէտսկի կօրպուսի և Ներսիսեան ուսումնարանի համար:

Ուսումնարանում, բացի զանազան գիմնազիական առարկաներից աւանդվում են այլ ևս հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և լատիներէն լեզուներ.

Ուսումնարանում ընդունվում են ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐ և ԵՐԹԵՒԵԿՆԵՐ:

Ուսումնարանը ամառը չէ տեղափոխվում ամարանոց, այլ ամբողջ ամառը մնալու է Թիֆլիսում, աշակերտներ պատրաստելու համար:

Աշակերտների ընդունելութիւնը սկսված է այժմեանից:

Հասցէն. Тифлисъ, Гановская улица, № 3.

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱՒԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕՂՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ· ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվկու և Ագմուրովի դեղատներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկէրի մօտ, ՔՈՒԹԱԻԻՍՈՒՄ՝ Կօկօչեվի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ, Բրօխնօցկու մօտ և ԵԿԱԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ: 17—52 (Հ.)

Дозволено цензурою, Тифлисъ 24 Мая 1889 г.

Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.